ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ 2023Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի ԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ (ԳՐԱՎՈՐ) ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) որակավորման հանձնաժողովը (**այսուհետ՝ Հանձնաժողով**), մասնակցությամբ՝ Հանձնաժողովի նախագահ Հունան Տեր-Վարդանյանի, անդամներ՝ Արա Զոհրաբյանի, Արտյոմ Սուջյանի, Արսեն Համբարձումյանի, Միսակ Մարկոսյանի, Արթուր Պողոսյանի, Արմինե Ֆանյանի և Գառնիկ Թուխտարյանի

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական ակադեմիա**) ունկնդիրների որակավորման քննությունների գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով առարկայական քննական հանձնախմբերի անդամների կողմից որակավորման քննության գրավոր առաջադրանքները ստուգելու հանգամանքը,

ուսումնասիրելով աշխատանքները և հանձնախմբի անդամների կողմից ունկնդիրների չբացահայտված աշխատանքների գնահատականները,

հիմք ընդունելով Հանձնաժողովի անդամների կողմից կատարված գնահատականները՝ ըստ ծածկագրերի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 45.11-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 98-րդ կետի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Ամփոփել ՀՀ փաստաբանական ակադեմիայի քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության ունկնդիրների 2023թ. նոյեմբերի 2-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով իրավական խնդիրներ և հայցադիմում կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Ամփոփել ՀՀ փաստաբանական ակադեմիայի քրեաիրավական ուղղվածության ունկնդիրների 2023թ. նոյեմբերի 3-ին տեղի ունեցած որակավորման քննությունների առաջին փուլի արդյունքները՝ գնահատելով

Որոշում N 11-Ա
14 նոյեմբեր 2023թ.

իրավական խնդիրներ և դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու վերաբերյալ գրավոր աշխատանքները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատի 4-րդ հարկում գտնվող ցուցատախտակի վրա:

4. 2023թ. նոյեմբերի 14-ին ժամը 18:30-ին ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեում գտնվող Պալատի շենքի 4-րդ հարկի մեծ դահլիճում բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի թերթիկները.

5. Սահմանել, որ՝

1) որակավորման քննությունների առաջին փուլը չհաղթահարած հավակնորդը չի կարող մասնակցել երկրորդ փուլի քննություններին.

2) ՀՀ փաստաբանական ակադեմիայի կողմից տրված հավաստագիրը իրավունք է տալիս քննությունը չհաղթահարած ունկնդրին հավաստագրի գործողության ժամկետում մասնակցելու փաստաբանի որակավորման քննություններին:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝ Հունան Տեր-Վարդանյան

Որոշում N 11-Ա
ք. Երևան
14 նոյեմբեր 2023թ.